ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

0018, ք. Երևան, Մ.Խորենացու 162Ա, հեռ.010557704, erebuni-dataran@mail.ru, www.court.am

07.12.2022թ.
ԴԴԱ-8 /2-297837/22

07.12.22

Հայցվոր՝ <<Լեբրոն>> ՍՊԸ
/ք. Երևան, Աջափնյակ, Նոր Արեշ թաղ., 27շ., բն. 72/

Հայցվոր՝ <<Լեբրոն>> ՍՊԸ-ի ներկայացուցիչ Լևոն Օհանյանին
/ք. Երևան, Իսրայելյան 39/

Պատասխանող՝ <<Երևանի կենդանաբանական այգի>> ՀՈԱԿ-ի <<ԵՔԿԱ-ՀՄԱՊՁԲ-22/07>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով
/ք. Երևան, Մյասնիկյան 20/

Երրորդ անձ՝ <<Երևանի կենդանաբանական այգի>> ՀՈԱԿ
/ք. Երևան, Մյասնիկյան 20/

ՀՀ ֆինանսների նախարարությանը
/ք. Երևան, Մելիք-Ադամյան 1/

Ձեզ է ուղարկվում Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԴ/49161/02/22 քաղաքացիական գործով 07.12.2022 թվականի վճռի բնօրինակը :

Առդիր՝ 13 թերթ:

ԴԱՏԱՎՈՐԻ ՕԳՆԱԿԱՆ Մ.ՆԵՐՍԻՍՅԱՆ

Գործ թիվ ԵԴ/49161/02/22

ՎՃԻՌ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

07 դեկտեմբերի 2022թ. **ք. Երևան**

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը

նախագահությամբ՝ **դատավոր Տաթևիկ Ստեփանյանի,**
քարտուղարությամբ՝ Արուս Մկրտչյանի,

դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի <<Լեբրոն>> ՍՊԸ-ի ընդդեմ <<Երևանի կենդանաբանական այգի>> ՀՈԱԿ-ի <<ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի, երրորդ անձ՝ <<Երևանի կենդանաբանական այգի>> ՀՈԱԿ-ի՝ <<Երևանի կենդանաբանական այգի>> ՀՈԱԿ-ի՝ կարիքների համար մսեղիքի ձեռքբերման նպատակով կազմակերպված <<ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.07.2022թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

<u>Դատավարական նախապատմությունը</u>

<<Լեբրոն>> ՍՊԸ-ն 19.10.2022թ. հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ <<Երևանի կենդանաբանական այգի>> ՀՈԱԿ-ի <<ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի, երրորդ անձ՝ <<Երևանի կենդանաբանական այգի>> ՀՈԱԿ-ի՝ <<Երևանի կենդանաբանական այգի>> ՀՈԱԿ-ի՝ կարիքների համար մսեղիքի ձեռքբերման նպատակով կազմակերպված <<ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.07.2022թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

24.10.2022թ. հայցադիմումը հանձնվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Տ. Ստեփանյանին:

Դատարանի՝ 27.10.2022թ. որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Դատարանի՝ 27.10.2022թ. որոշմամբ որոշվել է գործը քննել գրավոր ընթացակարգով և դատական ակտի հրապարակման օր նշանակել 07.12.2022թ.:

<u>Հայցվորի դիրքորոշումը</u>

Դիմելով Դատարան՝ հայցվորը հայտնել է, որ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից մսեղիքի ձեռքբերման նպատակով 08.04.2022թ.-ին հայտարարվել է «ԵՔԿԱ-ՀԱԱԱՊՁԲ-22/07» ծածկագրով գնման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով մի շարք չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Լեբրոն» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.06.2022թ.-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Լեբրոն» ՍՊԸ-ն «ԵՔԿԱ-ՀԱԱԱՊՁԲ-22/07» ծածկագրով

գնանշման հարցման ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված (հաղթող) մասնակից:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի դրույթներով, որոշել է հաստատել պայմանագիր կնքելու մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ: Անգործության ժամկետը սահմանվել է 5 օրացուցային օր:

Հանձնաժողովի 08.07.2022թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ «ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07» ծածկագրով գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչված «Լեբրոն» ՍՊԸ-ին օրենքով սահմանված կարգով և 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին չի ներկայացրել պայմանագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումները, ուստի որոշել է «Լեբրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել համապատասխան գործընթաց:

Լիազորված մարմինը՝ հանձինս ՀՀ ֆինանսների նախարարության «Լեբրոն» ՍՊԸ-ին ներառել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի 08.07.2022թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշումները և Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները:

Այն դեպքում, երբ ցուցակում ընդգրկվելու համար անհրաժեշտ էր նախ՝ Պատվիրատուի՝ սույն գործով պատասխանողի պատճառաբանված որոշում, ինչպես նաև ապացուցված համարել Ընկերության մեղավորությունը և վերջինիս կողմից անհիմն գործողություններ կամ անգործություն կատարելու փաստը, որը մեր դեպքում իսպառ բացակայում է: Այսինքն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվելու համար անհրաժեշտ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթները չեն համադրվել Հայցվոր ընկերության կողմից կատարած/չկատարած գործողություններին, որի արդյունքում միայն հնարավոր կլիներ ապացուցված համարել, որ Ընկերությունն իրապես թույլ է տվել Օրենքի նշված դրույթների խախտում, ու այնուհետև վերջինիս ներառել ցուցակում:

Ընդ որում՝ պատասխանողը ընկերությանը վերջինիս պայմանագիր ստորագրելու իրավունքից զրկել է առանց կարծիքը լսելով, որով սահմանափակել է վերջինիս իրավունքների ու օրինական շահերի իրականացումը, դրանց պաշտպանությունը:

Ավելին՝ Պատասխանողը Ընկերությանը պայմանագիր կնքելու մասին ծանուցում չի ուղարկել, այնինչ պարտավոր էր:

<<Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի և (կամ) որակավորման ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել ապահովումը: Եթե ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 10 աշխատանքային օր: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը:

Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից: Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող չորրորդ աշխատանքային օրը:

կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով, Ընկերությանը 25.08.2022թ. ներառել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 տարի ժամկետով՝ թիվ 1482 համարի տողի ներքո:

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից «Լեբրոն» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու մասին ծանուցում չի ուղարկվել:

«Լեբրոն» ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ պատվիրատուի՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի ղեկավարի պատճառաբանված որոշում չի կայացվել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը:

Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի

առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում՝ փաստում ենք, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու հանգամանքի համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում

ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում՝ գալիս ենք այն եզրահանգման, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը՝ անհրաժեշտության դեպքում:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես

նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելով որակավորման ապահովում, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Հարկ ենք համարում փաստել նաև, որ Օրենսդիրը, պայմանագրի և/կամ պայմանագրի ապահովում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 10 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ պայմանագրի և/կամ որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորությունները: Ուստի Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտումսմբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից պայմանագիր կնքելուց հրաժարվելու մասին:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից «Լեբրոն» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու մասին ծանուցում չի ուղարկվել:

Սակայն Հանձնաժողովի 08.07.2022թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ Պատվիրատուն (հանձնաժողովը) Ընկերությանը փաստացի զրկել պայմանագիր կնքելու իրավունքից՝ անհիմն կերպով Ընկերությանը կանգնեցնելով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող, մասնակիցների ցուցակում 2 (երկու) տարի ժամկետում ընդգրկվելու վտանգի առջև:

Այսպիսով, «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից մսեղիքի ձեռքբերման նպատակով 08.04.2022թ.-ին հայտարարված «ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.07.2022թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ «Լեբրոն» ՍՊԸ-ին փաստացի պայմանագիր ստորագրելու իրավունքից զրկելով, ըստ այդմ՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով համապատասխան գործընթաց նախաձեռնելու մասին կայացված որոշումն իրավաչափ չէ և չի ելնում գնումների մասին վերոնշյալ նորմերի դրույթներից, որպիսի պայմաններում այն ենթակա է անվավեր ճանաչման (վերացման):

Ելնելով վերոգրյալից՝ Դատարանին խնդրել է անվավեր ճանաչել (վերացնել) «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից մսեղիքի ձեռքբերման նպատակով 08.04.2022թ. հայտարարված «ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.07.2022թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ «Լեբրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

ներառելու նպատակով համապատասխան գործընթաց նախաձեռնելու մասին կայացված որոշումը:

Պատասխանողի դիրքորոշումը

Պատասխանողը պատշաճ կերպով ծանուցվել է իր դեմ հարուցված քաղաքացիական գործի վերաբերյալ, սակայն հայցադիմումի պատասխան չի ներկայացրել:

Գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը

1. «ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի 13.06.2022թ. թիվ 4 արձանագրության համաձայն՝ 13.06.2022թ. ժամը 12:00-ին՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի գրասենյակում տեղի է ունեցել մսեղիքի ձեռքբերման «ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը, որի համաձայն՝ «ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում 1-ին չափաբաժնի մասով «Արամ Գրիգորյան Մեխակի» ԱՁ-ն, 2-րդ չափաբաժնի մասով «Հայկ Սարգսյան» Ա/Ձ-ն, 3-րդ չափաբաժնի մասով «Արտաշես Սիմոնյան» Ա/Ձ-ն, 6-րդ չափաբաժնի մասով <<Լեբրոն>> ՍՊԸ-ն սահմանված ժամկետում՝ ոչ ուշ քան 10.06.2022թ. ներառյալ, սահմանված կարգով չեն ներկայացրել պայմանագրերի իրենց կողմից հստատված օրինակները, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները:

Նույն արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը որոշել է «Արամ Գրիգորյան Մեխակի» ԱՁ-ին, «Հայկ Սարգսյան» Ա/Ձ-ին, «Արտաշես Սիմոնյան» Ա/Ձ-ին, <<Նոբիլիս Գրուպ>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել համապատասխան գործընթաց:

«ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ չափաբաժնների մասով ընտրված մասնակիցներ հայտարարել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցներին, որում ներառված է նաև <<Լեբրոն>> ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության համաձայն՝ Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին հանձնաժողովը որոշեց.

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ Կողմ՝ 3, դեմ՝ 0:

Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին հանձնաժողովը որոշեց.

Հաստատել պայմանագրի նախագիծը,

Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմնագիրը ստորագրելու իրավունքից համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.07.2022թ. թիվ 5 արձանագրության համաձայն՝ 08.07.2022թ. ժամը 12:00-ին՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի գրասենյակում տեղի է ունեցել մսեղիքի ձեռքբերման «ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը, որի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի անդամներին տեղեկացրեց, որ «ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում 3-րդ չափաբաժնի մասով <<Լեբրոն>> ՍՊԸ-ն և 6-րդ չափաբաժնի մասով <<Արամ Գրիգորյան Մեխակի>> Ա/Ձ-ն սահմանված ժամկետում՝ ոչ ուշ քան 06.07.2022թ. ներառյալ, սահմանված կարգով չեն ներկայացրել պայմանագրերի իրենց կողմից հաստատված օրինակները, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները:

Հանձնաժողովը որոշեց հետևյալը.

<<Լեբրոն>> ՍՊԸ-ին և <<Արամ Գրիգորյան Մեխակի>> Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել համապատասխան գործընթաց:

«ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում 3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակիցներ հայտարարել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցներին, որում ներառված չէ նաև <<Լեբրոն>> ՍՊԸ-ն:

Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին հանձնաժողովը որոշեց.

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝

Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին հանձնաժողովը որոշեց.

Հաստատել պայմանագրի նախագիծը,

Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմնագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

3. Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկի համաձայն՝ <<Լեբրոն>> ՍՊԸ-ն՝ 25.08.2022թ.-25.08.2024թ. ներառվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում, Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<բ>> ենթակետ:

<u>Դատարանի իրավական վերլուծությունները և եզրահանգումները</u>

Դատարանը վերլուծելով և գնահատելով գործում առկա ապացույցները բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ, հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ՝ գտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ ենթակետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված

ցուցակում, եթե՝ որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի և (կամ) որակավորման ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել ապահովումը: Եթե ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 10 աշխատանքային օր: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը:

Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից: Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող չորրորդ աշխատանքային օրը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի Թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» /այսուհետ՝ Կարգ/ 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝

ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով:

Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից բխում է, որ ընտրված մասնակիցը, ստանալով հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը՝ անհրաժեշտության դեպքում:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից, ինչ պայմաններում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի 13.06.2022թ. թիվ 4 արձանագրության համաձայն՝ 13.06.2022թ. ժամը 12:00-ին՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի գրասենյակում տեղի է ունեցել մսեղիքի ձեռքբերման «ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը, որի համաձայն՝ «ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում 1-ին չափաբաժնի մասով «Արամ Գրիգորյան Մեխակի» ԱՁ-ն, 2-րդ չափաբաժնի մասով «Հայկ Սարգսյան» Ա/Ձ-ն, 3-րդ չափաբաժնի մասով «Արտաշես Սիմոնյան» Ա/Ձ-ն, 6-րդ չափաբաժնի մասով <<Լերրոն>>

ՍՊԸ-ն սահմանված ժամկետում՝ ոչ ուշ քան 10.06.2022թ. ներառյալ, սահմանված կարգով չեն ներկայացրել պայմանգրերի իրենց կողմից հստատված օրինակները, ինչպես նաև պայմանահրի և որակավորման ապահովումները:

Նույն արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը որոշել է «Արամ Գրիգորյան Մեխակի» ԱՁ-ին, «Հայկ Սարգսյան» Ա/Ձ-ին, «Արտաշես Սիմոնյան» Ա/Ձ-ին, <<Նոբիլիս Գրուպ>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել համապատասխան գործընթաց:

«ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ չափաբաժնների մասով ընտրված մասնակիցներ հայտարարել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցներին, որում ներառված է նաև <<Լեբրոն>> ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության համաձայն՝ Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին հանձնաժողովը որոշեց.

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ Կողմ՝ 3, դեմ՝ 0:

Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին հանձնաժողովը որոշեց.

Հաստատել պայմանագրի նախագիծը,

Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմնագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

«ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.07.2022թ. թիվ 5 արձանագրության համաձայն՝ 08.07.2022թ. ժամը 12:00-ին՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի գրասենյակում տեղի է ունեցել մսեղիքի ձեռքբերման «ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը, որի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի անդամներին տեղեկացրեց, որ «ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում 3-րդ չափաբաժնի մասով <<Լեբրոն>> ՍՊԸ-ն և 6-րդ չափաբաժնի մասով <<Արամ Գրիգորյան Մեխակի>> Ա/Ձ-ն սահմանված ժամկետում՝ ոչ ուշ քան 06.07.2022թ. ներառյալ, սահմանված կարգով չեն ներկայացրել պայմանագրերի իրենց կողմից հաստատված օրինակները, ինչպես նաև պայմանագրի և որակավորմն ապահովումները:

Հանձնաժողովը որոշեց հետևյալը.

<<Լեբրոն>> ՍՊԸ-ին և <<Արամ Գրիգորյան Մեխակի>> Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել համապատասխան գործընթաց:

«ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում 3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակիցներ հայտարարել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցներին, որում ներառված չէ նաև <<Լեբրոն>> ՍՊԸ-ն:

Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին հանձնաժողովը որոշեց.

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝

Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին հանձնաժողովը որոշեց.

Հաստատել պայմանագրի նախագիծը,

Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմնագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկի համաձայն՝ <<Լեբրոն>> ՍՊԸ-ն՝ 25.08.2022թ.-25.08.2024թ. ներառվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում, Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<բ>> ենթակետ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը:

Դատարանը գործի փաստերը համադրելով վերոշարադրյալ իրավանորմերի հետ՝ արձանագրում է, որ պատասխանողը չապացուցեց վիճարկվող որոշման հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերը:

Դատարանի նման եզրահանգումը հիմնված է այն փաստի վրա, որ գործում առկա է միայն Գնահատող հանձնաժողովի՝ Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին որոշումը, որով Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով՝ անգործության ժամկետ է սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը և հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը, մինչդեռ գործում բացակայում է ապացույց առ այն, որ սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը պատվիրատուն ծանուցել է Հայցվորին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, ինչի պարտադիր պահանջի կատարումը միայն հնարավարության կտար Պատասխանողինգնահատել հայցվորի անգործությունը և կիրառել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետերի դրույթներ և Հայցվորին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Վերոգրյալից ելնելով՝ Դատարանը հայցը դիտում է հիմնավոր և բավարարման ենթակա, հետևաբար պետք է անվավեր ճանաչել «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից մսեղիքի ձեռքբերման նպատակով 08.04.2022թ. հայտարարված «ԵՔԿԱ-ՀՄՆԱՊՁԲ-22/07» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.07.2022թ. ժամը

12:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ՝ «Լեբրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով համապատասխան գործընթաց նախաձեռնելու մասին կայացված որոշումը:

Դատարանն անդրադառնալով դատական ծախսերի հարցին՝ գտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ Դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցվորը հայցադիմում ներկայացնելիս նախապես վճարել է օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը և հայցը բավարարվում է՝ Դատարանը գտնում է, որ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ից հօգուտ «Լեբրոն» ՍՊԸ-ի պետք է բռնագանձել 50000 ՀՀ դրամ, որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-րդ, 192-րդ հոդվածներով՝ Դատարանը,

ՎՃՌԵՑ

«Լեբրոն» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ <<Երևանի կենդանաբանական այգի>> ՀՈԱԿ-ի <<ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի, երրորդ անձ՝ <<Երևանի կենդանաբանական այգի>> ՀՈԱԿ-ի՝ <<Երևանի կենդանաբանական այգի>> ՀՈԱԿ-ի՝ կարիքների համար մսեղիքի ձեռքբերման նպատակով կազմակերպված <<ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.07.2022թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից մսեղիքի ձեռքբերման նպատակով 08.04.2022թ. հայտարարված «ԵՔԿԱ-ՀՄՆԱՊՁԲ-22/07» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.07.2022թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ՝ «Լեբրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով համապատասխան գործընթաց նախաձեռնելու մասին կայացված որոշումը ճանաչել անվավեր:

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ից հօգուտ «Լեբրոն» ՍՊԸ-ի բռնագանձել՝ 50000 ՀՀ դրամ, որպես վճարված պետական տուրքի գումար:

Վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան այն ստանալուց հետո տասնհիգօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ**

Ծանոթություն: Սույն վճռի դեմ վերաքննիչ բողոք չի ներկայացվել, և վճիռը մտել է օրինական ուժի մեջ _____2022թ.:

ԴԱՏԱՎՈՐ **Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ**